ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Հ.Մաթևոսյանի մոտ 2019 թվականի դեկտեմբերի 4-ին կայացած խորհրդակցության

Մասնակցությամբ՝

Ջրային կոմիտեի Ջրօգտագործող ընկերություններին
աջակցող խմբի համակարգող Կ.Դադոյանի

ՀՀ Արմավիրի մարզի ՋՕԸ տնօրենների

ՀՀ Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության
և բնապահպանության վարչության պետ Ա.Այվազյանի

ՀՀ Արմավիրի մարզի համայնքների ղեկավարների

Օրակարգում

ՀՀ Արմավիրի մարզում համայնքների ոռոգման ներտնտեսային համակարգերի արդիականացման ծրագրի վերաբերյալ

/Հ. Մաթևոսյան-ՀՀ Արմավիրի մարզպետ/

Օրակարգային հարցի առնչությամբ ՀՀ Արմավիրի մարզպետ Հ.Մաթևոսյանը խորհրդակցության մասնակիցներին տեղեկացրեց, որ խորհրդակցության հիմնական նպատակը ՀՀ Արմավիրի մարզում Եվրասիական զարգացման բանկի ֆինանսավորմամբ և համայնքների 10 տոկոս համաֆինանսավորմամբ ոռոգման ներտնտեսային համակարգերի արդիականացման ծրագրի շրջանակներում ՀՀ Արմավիրի մարզի թվով 41 համայնքներում 2020 թվականին նախատեսվող 91,630 մետր երկարությամբ ներտնտեսային ցանցի վերանորոգման աշխատանքների իրականացման հետ կապված խնդիրների քննարկումն է: Ծրագրի առաջին փուլով մարզի 25 համայնքներում արդեն ավարտվել են նախապատրաստական աշխատանքները և առաջիկա օրերին կմեկնարկի ծրագրի երկրորդ փուլը՝ որի ընթացքում համապատասխան աշխատանքներ կիրականացվեն նաև մյուս 16 համայնքներում:

Մարզպետ Հ.Մաթևոսյանը կարևորելով մարզում ներտնտեսային համակարգերի բարելավմանն ուղղված ծրագրի իրականացումը նշեց, որ սա մարզում իրականացվող կարևորագույն ծրագրերից է, որը ոչ միայն դրական արդյունք կապահովի շահառու, այլև հարակից համայնքների համար: Նա ընդգծեց, որ եթե կան ծրագրում ընդգրկված համայնքներ, որոնք ինչ-ինչ պատճառներով չեն կարող մասնակցություն ունենալ և կամ կթերանան իրենց պարտականությունների պատշաճ կատարման մեջ, ցանկալի է որ հնարավորինս վաղ տեղեկացնեն դրա մասին, որպեսզի հնարավորության շրջանակներում ծրագիրն իրականացվի մեկ այլ համայնքում: Այնուհետև Ջրային կոմիտեի Ջրօգտագործող ընկերություններին աջակցող խմբի համակարգող Կարեն Դադոյանը խորհրդակցության մասնակից համայնքների ղեկավարներին ներկայացրեց ծրագրի իրականացման տեխնիկական մանրամասները:

Օրակարգային հարցի քննարկման ավարտմամբ ՀՀ Արմավիրի մարզպետ Հ.Մաթևոսյանը խորհրդակցությունը հայտարարեց ավարտված:

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝ ***Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ***

12/24/2019

X

VERIFIED OCSP 12/24/2019 12:20:17 GMT+4

Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

Արձ՝ Մ.Առուշանյան